

**ԵԹԿՊԻ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

<b>16.12.2015թ-նոյեմբեր 2016թ.</b>	ՈԱԿ-ը իրականացրեց ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության բոլոր աշխատանքների համակարգումը:
<b>հունվար 11</b>	ՈԱԿ-ը մասնակցեց ԵԹԿՊԻ-ի Կարիերայի և պրակտիկայի կենտրոնին կից գործող ԵԹԿՊԻ-ի շրջանավարտների խորհրդի նիստին
<b>հունվար 25-փետրվար 4</b>	ԵԹԿՊԻ-ի նոր բուկլետի նախորդ տարում մշակված տեքստի վերանայում, վերջնական տեսքի բերում հայերեն և անգլերեն լեզուներով
<b>փետրվար 4-22</b>	լրացվեց ՈԱԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանի մասնագիտական կրթական համակարգի որակի ապահովման գործընթացների 2-րդ համակողմանի հետազոտության» հարցաթերթը (14 էջ, 37 հարց)
<b>մարտ 3- 4</b>	ՈԱԿ-ը մասնակցեց “ARMENQA” (Որակավորումների ազգային և ոլորտային (սեկտորալ) շրջանակների իրականացումը Հայաստանում) ծրագրի նիստերին
<b>մարտ 3- 4</b>	ՈԱԿ-ը մասնակցեց «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության զարգացում՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» թվինինգ ծրագրին
<b>մարտ 4-15</b>	նոր հարցաթերթերի ստեղծում՝ <ul style="list-style-type: none"> <li>✓ Գործատուների հարցաթերթ</li> <li>✓ Դասախոսը և առարկան ուսանողի աչքերով</li> </ul>
<b>մարտ 29-30</b>	ՈԱԿ-ը մասնակցեց ԵԹԿՊԻ-ի բուհական գիտաժողովի բոլոր 3 նիստերին
<b>ապրիլ 18, 19, 20</b>	ՈԱԿ-ը իրականացրեց ԵԹԿՊԻ-ի դասախոսների տեղեկատվական դասընթաց
<b>ապրիլ 25</b>	ՈԱԿ-ը իրականացրեց ԵԹԿՊԻ-ի Ուսանողական խորհրդի անդամների տեղեկատվական դասընթաց
<b>ապրիլ 25-29</b>	ՈԱԿ-ը մասնակցեց Ադամ Միցկևիչի համալսարանի ներկայացուցիչների կողմից իրականացվող վարպետության դասերին ԵԹԿՊԻ-ում
<b>մայիս 2-20</b>	ՈԱԿ-ը Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի հետ համատեղ իրականացրեց գործատուների հարցումը:
<b>մայիս 20</b>	ՈԱԿ-ը իրականացրեց ուսանողների ընդհանուր տեղեկատվական դասընթաց
<b>մայիսի 25-30</b>	Ադամ Միցկևիչի համալսարանի ներկայացուցիչների կողմից իրականացրած վերապատրաստման դասերի մասնակիցների մասնակցության ցուցակի գրաֆիկի կազմում, սերտիֆիկատների անուն ազգանունների լատինատառ ցուցակների կազմում:
<b>մայիս 25-31</b>	ՈԱԿ-ը մշակեց Որակի ապահովման և Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնների մասնագետների

	աշխատանքային գործառույթները՝ պաշտոնի անձնագրի տեսքով
<b>հունիս 13-17</b>	ՈԱԿ-ը մասնակցեց Հելսինկիի Uniarts թատրոն- ակադեմիայի ԹՎԻՆԻՆԳ ծրագրին ԵԹԿՊԻ-ում
<b>հուլիս 1-5</b>	ԵԹԿՊԻ-ի պորտալի համար մշակվեց ՈԱԿ-ի մասին տեղեկատվական նյութ
<b>հուլիս 6-20</b>	ՈԱԿ-ը իրականացրեց ԵԹԿՊԻ-ի Գիտական խորհրդով հաստատված բոլոր փաստաթղթերի պատճենահանում, սքանավորում և էլեկտրոնային համակարգում, որը նաև տրվել է ԵԹԿՊԻ-ի պաշտոնական կայք տեղադրելու նպատակով:
<b>օգոստոս 25</b>	ստեղծվեց Որակի ապահովման վերաբերյալ գրականության անկյուն
<b>օգոստոս 30</b>	Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ
<b>օգոստոս 26-31</b>	ՈԱԿ-ը մասնագետը թարգմանեց հետևյալ փաստաթղթերը՝ Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի կանոնակարգ (Regulation of the international regulations and life-long learning center) Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ (Regulations of Quality Assurance Center)
<b>սեպտեմբեր-դեկտեմբեր</b>	կազմվեց ԵԹԿՊԻ-ի բարելավման պլան 10 չափանիշների համար՝ փորձագիտական զեկույցին համապատասխան ՈԱԱԿ ներկայացնելու նպատակով
<b>սեպտեմբեր 5-9</b>	ՈԱԿ-ը տրամադրեց ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի մասին տեղեկատվություն ֆակուլտետներին: Կազմվեց ուսանողների ցուցակ ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ծրագրի շրջանակներում կրթության որակի կառավարման դասընթացներին մասնակցելու նպատակով:
<b>սեպտեմբեր 9</b>	Գիտական մասի ԵԹԿՊԻ-ի գործող կանոնակարգերի ցանկի վերանայում և համալրում, նույնացում ՈԱԿ-ի փաստաթղթերի հետ
<b>սեպտեմբեր 20</b>	ստեղծվեց Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնախումբ
<b>սեպտեմբեր 21</b>	ստեղծվեց Ուսանողական խորհրդում որակի հանձնախումբ
<b>սեպտեմբեր 26</b>	մշակվեց հումանիտար և տեսական առարկաներից բավարարվածության հարցաթերթ
<b>սեպտեմբեր 27-28</b>	անցկացվեցին հարցումներ, կատարվեցին վերլուծություններ և քննարկումներ դասախոսների հետ
<b>սեպտեմբեր 29</b>	մշակվեցին ֆոկուս խմբերի քննարկման հարցեր, արձանագրություններ, մասնակիցների ցանկ
<b>սեպտեմբեր 30</b>	ՈԱ կանոնակարգի վերամշակում և հաստատում
<b>սեպտեմբեր 30</b>	ՈԱԿ մասնագետը մասնակցեց ՀՊՄՀ-ի և ՏԵՄՊՈՒՄԻ ՄԱՀԱԹՄԱ «Բարձրագույն կրթության կառավարում մագիստրոսական կրթական

	ծրագրի մշակում. կրթական բարեփոխումներ իրականացնող առաջնորդների պատրաստում» դրամաշնորհային ծրագրի պաշտոնական ամփոփ համաժողովին
<b>հոկտեմբեր 12,13,14-26,27,28</b>	ՈԱԿ բոլոր աշխատակիցները մասնակցեցին ՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Որակի ներքին ապահովման համակարգի զարգացում» թեմայով վերապատրաստումներին
<b>հոկտեմբեր 19</b>	ՈԱԿ հավատարմագրման հանձնաժողով, ԵԹԿՊԻ-ի հավատարմագրման մասին որոշման կայացում
<b>հոկտեմբեր 20</b>	Ֆոկուս խումբ քննարկում դասախոսների հետ
<b>նոյեմբեր 10</b>	մեթոդ խորհրդի անդամների հետ սեմինար-քննարկում, սլայդ շոուի ցուցադրում (ppt)
<b>նոյեմբեր 11-16</b>	կազմվեց ԵԹԿՊԻ-ում անցկացված միջոցառումների ցանկ՝ սկսած 2016թ. սեպտեմբերի 1-ից
<b>նոյեմբեր 21</b>	ՈԱԿ-ի կողմից ներկայացված ձևաչափով կազմվեց մինչև 35 տարեկան դասախոսների ցուցակ ՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Որակի շաբաթ» միջոցառումների շարքի համար՝ ըստ ամբիոնների
<b>նոյեմբեր-դեկտեմբեր</b>	ՈԱԿ-ը կոորդինացրեց 2015-2016թթ. ՀՀ բուհերի վարկանիշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների ցանկի լրացման տվյալների հավաքագրման և լրացման գործընթացը: Նախարարության հարցազրույցների համար անհրաժեշտ դասախոսների հավաքագրում:
<b>դեկտեմբեր 1</b>	ԵԹԿՊԻ-ում իրականացված եռամսյա «Գրիմ» և «Հագուստի մոդելավորում» վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը և ուսանողի գոհունակությունը դրանցից- հարցում
<b>դեկտեմբեր 12, 13</b>	ՈԱԿ-ը Ուսանողական խորհրդի հետ համատեղ 2 օր շարունակ իրականացրեց տեղեկատվական օր-սեմինար՝ «Որակի ապահովումը ուսանողների համար» խորագրով: Սեմինարին մասնակցեցին ԵԹԿՊԻ-ի Անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ավագյանը, բոլոր ֆակուլտետների ղեկանները, դասախոսներ, ՈԱԿ անձնակազմը, Ուխ ներկայացուցիչներ և բոլոր առաջին կուրսեցիները:
<b>դեկտեմբեր 13-14</b>	ՈԱԿ մասնագետը մասնակցեց «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ծրագրի արդյունքների ներկայացում» թեմայով համաժողովին
<b>դեկտեմբեր 15-27</b>	իրականացվեց առաջին կուրսեցիների քննությունների լսումներ՝ մշտադիտարկման նպատակով

<b>ընթացիկ</b>	ստեղծվեց ֆեյսբուքյան էջ՝ ՈԱԿ-ի մասին տեղեկատվության թափացիկ հարթակ ունենալու ակնկալիքով: Էջում պարբերաբար տեղադրվում են ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման հետ առնչվող նյութեր:
<b>ընթացիկ</b>	Ամբողջ տարվա ընթացքում ՈԱԿ-ը մասնակցել է ռեկտորատի, գիտական խորհրդի, մեթոդ խորհրդի, ֆակուլտետների և ինստիտուտի ստորաբաժանումների նիստերին:
<b>ընթացիկ</b>	ՈԱԿ-ը զբաղվել է <a href="mailto:info@ysitc.am">info@ysitc.am</a> և <a href="mailto:davit.muradyan@ysitc.am">davit.muradyan@ysitc.am</a> էլեկտրոնային հասցեների նամակագրություններով, փաստաթղթաշրջանառությամբ, ինֆորմացիայի տրամադրմամբ: Հետևել է համացանցի հայտարարություններին (օրինակ՝ ՈԱԱԿ վերապատրաստումներ) և զբաղվել ինստիտուտում դրանց տարածմամբ: